



ՅԻՍՈՒՄ ՄԱՆՈՒԿԻՆ ԾՆՈՒՆԴԸ

2000 տարի առաջ, օր մը՝ Գաբրիել հրեշտակը յայտնուեցաւ Մարիամ անունով երիտասարդ կնոջ մը եւ յայտնեց, որ ան շուտով պիտի յղանայ եւ ծնի Փրկիչը, որ պիտի փրկէ ժողովուրդը իրենց մեղքերէն: Մարիամ եւ իր ապագայ ամուսինը՝ Յովսէփ, կ'ապրէին Նազարէթ քաղաքին մէջ: Անոնք մեկնեցան Բեթլեհէմ քաղաք՝ արձանագրուելու մարդահամարի, որ պատուիրած էր Յոմեական կայսրութիւնը:

Երբ Յովսէփ ու Մարիամ հասան Բեթլեհէմ, Յովսէփ կեցութեան տեղ մը փնտռեց, բայց բոլոր իջեւանները արդէն լեցուն էին: Անոնք ի վերջոյ գիշերեցին օթոռի մը մէջ, ուր կենդանիներ կային: Այդ գիշեր Յիսուս մանուկ ծնաւ: Այնտեղ ոչ անկողին կար, ոչ ալ օթոռոց, ուստի՝ Յիսուս մանուկ քնացաւ մսուրի մը մէջ:




Այդ գիշեր հովիւներ Բեթլեհէմի մօտ դաշտ մը կը գտնուէին, ուր կը հսկէին իրենց ոչխարներուն հօտերը: Յանկարծ հրեշտակ մը յայտնուեցաւ անոնց եւ աւետեց, որ Փրկիչը ծնաւ: Հովիւները շտապեցին Բեթլեհէմ եւ Յիսուսը գտան մսուրին մէջ, այնպէս ինչպէս հրեշտակը ըսած էր: Յիսուսը տեսնելէն ետք լուրը բոլորին տարածեցին եւ անոնք որոնք լսեցին՝ զարմացան:

Որոշ ժամանակ մը ետք արեւելեան երկիրներէն երեք իմաստուններ երկինքին մէջ պայծառ աստղ մը տեսան եւ որոշեցին հետեւիլ անոր: Անոնք պատահաբար Հրեաստան անցան: Այն ժամանակ Հրեաստանի թագաւորը Հերովդէսն էր: Ան ժողովի կանչեց իմաստունները, իմանալու Յիսուսի մասին: Անոնք կրկին հետեւեցան փայլուն աստղին: Աստղը հագիւ ախոռին հասաւ, յանկարծ անհետացաւ: Անոնք բոլորը ախոռ մտան եւ Յիսուս մանուկը տեսան խանձարուրի մէջ պառկած: Անոնք խոնարհեցան մանուկին առջեւ եւ իրենց նուէրները նուիրեցին անոր՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռ:

Այդ գիշեր, երբ բոլորը քնացած էին, իմաստուններէն մէկը երագ մը տեսաւ. Ան ձայն մը լսեց, որ կ'ըսէր թէ Հերովդէս թագաւորին մօտ պետք չէ վերադառնալ: Յաջորդ օրը անոնք այլ ճանապարհով տուն վերադարձան: Հերովդէս խաբած էր իմաստունները, ըսելով թէ ցանկութիւն ունի Յիսուս մանուկը տեսնելու եւ անոր երկրպագելու: Ան կը վախնար մտածելով որ Յիսուս մանուկը պիտի փոխարինէ զինք: Ան չէր հասկնար, որ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին եւ երկնքի ու երկրի թագաւորն էր: Մինչ Հերովդէս կը սպասէր երեք իմաստուններուն, կ'որոշէ իր զինուորները Բեթլեհէմ ուղարկել եւ կը հրամայէ սպանել երկու տարեկանէն վար բոլոր արու մանուկները:


Մինչ այդ, Բեթլեհէմի մէջ Հայր Յովսէփը երագ մը կը տեսնէ. ան երագին մէջ ձայն մը կը լսէ, որ զինք կ'առաջարկէ փախչիլ դէպի Եգիպտոս: Յաջորդ առաւօտն իսկ Յովսէփ Մարիամն ու Յիսուս մանուկը առնելով կը տանի Եգիպտոս, ուր պաշտպանուած պիտի ըլլային Հերովդէսէն: Անոնք Եգիպտոսի մէջ կ'ապրին մինչեւ Հերովդէսի մահը, ապա կը վերադառնան Նազարէթ քաղաք:

ԹԻՒՄ ՊԱՏՐԱՍՏԵՅ՝ ՄԱՐԻՄԱՒ ԱՇՈՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՄ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԳԵՐՈՒՄԻ ԸՆԴՈՒՄԻ ԿՈՄԻՏԵՍԸ



Կրևա՞ս լուծել:

Թիւերը յաջորդաբար միացնելով ամբողջացո՛ւր պատկերը, ապա՝ գունաւորե՛:



Գունաւորե՛ հետեւեալ պատկերը:



ՁԻՆԵՄԱՐԴԸ

Ձմեռնային ցուրտ օր մը, երբ Շաղիկն ու Արան պատուհանին մօտ նստած, հետաքրքրութեամբ նոր տեղացող ձիւնի փաթիլները կը դիտէին, Արա կ'առաջարկէ քոռ տունէն դուրս գալ եւ ընկերներուն հետ ամենամեծ ձիւնեմարդը շինել:

Իրապէս ալ, անոնք դուրս կը վազեն եւ լուր կու տան բոլոր ընկերներուն իրենց միանալու:

Բոլորն ալ խանդավառութեամբ կ'ընդունին Արային առաջարկը եւ կը սկսին երկու փոքրիկ ձիւնի գնդակներ, տարբեր չափերով մեծցնել եւ կազմել ձիւնեմարդուն մարմինն ու գլուխը: Աւարտելէն ետք, փոքրիկները իրենց տուներէն կը բերեն ստեպլին՝ ձիւնեմարդուն քթիկին համար, ձիթապտուղ՝ անոր աչուկներուն համար: Ապա երկու շիւղեր՝ ձեռքերուն համար:

Այսպիսով ձիւնեմարդը կ'ամբողջանայ: Միայն կը մնար անոր գլխարկ աւելցնել, որպէսզի մեր գեղեցիկ ձիւնեմարդուն տեսքը ամբողջանար: Փոքրիկները դարձեալ իրենց տուներէն զանազան գլխարկներ կը բերեն, սակայն ոչ մէկը կը հանգչի անոր գլխուն: Բաւական ապարդիւն փորձերէ ետք, հովը փչելուն պէս, իր հետ կը բերէ, հին բայց տարօրինակ սեւ գլխարկ մը, որ զարմանալի կերպով կը հանգչի ձիւնեմարդուն գլխուն: Սակայն փոքրիկները չգիտցան, որ այդ գլխարկը կախարդական էր...

Յանկարծ ձիւնեմարդը կը սկսի շարժիլ եւ



փոքրիկներուն հետ խօսիլ, որոնք ապշահար իրարու կը նայէին: Անոնք շուտով կ'ընկերանան ու կը մտերմանան, ձմեռնային հաճելի պտոյտներ կը կազմակերպեն ու միասին խաղեր կը խաղան: Փոքրիկները հագիւ դուրս կու գան իրենց տուներէն, ձիւնեմարդը իր կախարդական գլխարկը հագած, նոյն տեղը կանգնած կը սպասէր իրենց:

Այնքան ուրախ էին, որ օրերն ու շաբաթները շա՛տ արագ կ'անցնէին: Արդէն ձմեռնային վերջին օրերը հասած էին: Երբ արեւոտ օր մը ըստ սովորութեան փոքրիկները դուրս կու գան իրենց տուներէն ձիւնեմարդուն հետ խաղալու: Անոնք այնտեղ չեն տեսներ զինք... կը տխրին ու տուն կ'երթան իրենց ծնողքին քով հարցնելու թէ ո՞ր է իրենց սիրելի ձիւնեմարդը: Արդեօք գողցուեցա՞ւ, նեղուեցա՞ւ կամ թէ ի՞նչ պատահեցաւ: Անոնք կը պատասխանեն փոքրիկներուն.

- Սիրելի՛ փոքրիկներ, մի՛ մտահոգուիք: Ձիւնեմարդը գնաց հոն, ուր երբ օղը սկսի տաքնալ, բոլոր ձիւնեմարդերը կը հալին ու կ'անհետանան: Յաջորդ ձմեռնային երբ ձիւն տեղայ, դարձեալ պիտի յայտնուին եւ ուրախացնեն մեզ:

ԵՐԲ ՔՆԱՑԱԾ ԸԼԼԱՄ ԿԸ ՇԱՐԺԻՄ:

Ամեն գիշեր երբ քնացած ըլլանք, մեր մարմինը կը շարժենք մտաւորապէս քառասուն անգամ: Այդ շարժումը անհանդարտութեան արդիւնք չէ, այլ՝ կ'օգնէ, որ մեր արիւնը դիրասահ քալէ մարմինին մէջ եւ մեր մկանները չպրկուին:

ԵՐԲ ՔՆԱՑԱԾ ԸԼԼԱՄ ԿՐՆԱՄՍ ԼՍԵԼ:

Թէեւ որոշ ձայներ չեն արթնցներ մեզ, բայց անոնք «կը լսուին» ուղեղին կողմէ: Լսելով չարթնալուն պատճառը այն է, որ մեր ուղեղը կ'որոշէ թէ ո՞ր ձայնը աւելի կարեւոր է եւ պետք է արթնցնէ մեզ:

Գիտե՞ք, թէ մարդ իր անունը լսելով շուտով կ'արթնայ:

